# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄՈՒՄ

1988 թվականի դեկտեմբերի 4-ին տեղի ունեցավ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի հերթական նիստը:

Քննարկվեց ազգամիջյան ընդհարումների փաստերը կանխելու անհետաձգելի միջոցառումների հարցը: Նշվեց, որ հանրապետությունում շարունակում է պահպանվել լարված, պայթյունալի իրավիճակը: Վերջին օրերս այն բացահայտ սպառնալից բնույթ է ընդունել: Հայ-ադրբեջանական խառը բնակչությամբ որոշ ռեգիոններում սրվել և ընդլայնվել են կոնֆլիկտներն ու ընդհարումներն ազգային հողի վրա, մեծացել է գաղթականների փոխադարձ հոսքը: Մի շարք դեպքերում իրադարձությունները դուրս են եկել վերահսկողությունից, մարդկային կյանքեր խլել: Հանրապետությունը հայտնվել է ծայրահեղ վտանգավոր եզրագծում: Առանձնապես լարված իրավիճակ է ստեղծվել Գուգարքի, Ստեփանավանի, Գորիսի, Կալինինոյի, Արարատի, Վարդենիսի և այլ շրջաններում:

Ստեղծված իրադրության մեջ պատշաճ հաստատակամություն չեն ցուցաբերում կուսակցական, սովետական, կոմերիտական մարմինները: Նրանցից շատերի աշխատանքում չկա աշխատավորների իմակական շահերից բխող քաղաքական հստակ գիծ: Հաճախ նրանք զիջում են սկզբունքային դիրքերը, անցկացվող գաղափարադաստիարակչական աշխատանքին պակասում են խորությունն ու հարձակողականությունը: «Վստահությունը կորցնելու» վախը, իսկ երբեմն էլ ազգայնամոլ տրամադրություններով համակվելը հանգեցրին այն բանին, որ կուսակցական ակտիվի մի մասը ցած է սահում ինտերնացիոնալիստական դիրքերից:

Մամուլում տպագրվող և եթեր հաղորդվող շատ նյութեր հույզեր ու կրքեր են բորբոքում, սրում իրադրությունը:

Հայկական ՍՍՀ ներքին գործերի մինիստրությունը, նրա տեղական մարմինները վճռական միջոցներ չձեռնարկեցին կասեցնելու ազգամիջյան հողի վրա ընդհարումները, չկարողացան կատարել բնակչության անվտանգությունն ապահովելու խնդիրները:

Հանրապետությունում ըստեղծված իրավիճակը կուսակցական, սովետական և իրավապահ մարմինների գործունեության մեջ թույլ տված կոպիտ վրիպումների ու սխալների արդյունքն էր, որոնք չկարողացան արմատական բեկման հասնել աշխատավորական կոլեկտիվների, ուսումնական հաստատությունների բարոյահոգեբանական կլիման առողջացնելու գործում, ուժերը համախմբել կանխելու ընդհարումներն ազգամիջյան հիմքի վրա, զանգվածային անկարգությունները, որոնք մարդկային զոհերի հանգեցրին:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն կուսակցության քաղկոմներին, շրջկոմներին, անձամբ առաջին քարտուղարներին, իրավապահ մարմիններին պարտավորեցրեց գլխավորել ռեգիոնների իրադրությունը կայունացնելու, օրինականությունը և կարգուկանոնը վերականգնելու, զանգվածային անկարգությունների ու բռնացման սաստկացումը կանխելու աշխատանքը: Վճռականորեն կասեցնել ադրբեջանական ազգության անձանց Հայաստանի սահմաններից մեկնել հարկադրելու փաստերը, սկզբունքային հակահարված հասցնել ազգամիջյան ընդհարումներ հրահրող դեմագոգներին, նրանց, ովքեր փորձում են հասարակական վարքագծի դեմոկրատական ձևերը նենգափոխել անվերահսկելի գործողությունների սանձարձակությամբ:

Կուսակցական, սովետական, կոմերիտական, հասարակական կազմակերպություններին հանձնարարված է խորապես պարզաբանել, որ ներկայումս հիմնական խնդիրն է աշխատավորներին համախմբել ինտերնացիոնալիզմի, հեղափոխական վերակառուցման դիրքերում, հաղթահարել փոխադարձ բոլոր վիրավորանքներն ու խաղաղեցնել մարդկանց, կանգնեցնել դեպքերի վտանգավոր զարգացումը: Հիմնավորապես բարելավել ինտերնացիոնալ դաստիարակությունը սկզբնական կուսակցական կազմակերպություններում, աշխատավորական կոլեկտիվներում: Այն վարել յուրաքանչյուր կոմունիստի, ամեն մի աշխատավորի հետ տքնաջան, խորացված աշխատանքի մեթոդով:

Կուսակցության քաղկոմներին, շրջկոմներին, տեղական սովետների գործկոմներին, իրավապահ մարմիններին հանձնարարված է ապահովել բնակչության անվտանգությունը, գործարար քայլեր ձեռնարկել առողջացնելու ազգամիջյան հարաբերությունները: Անզիջում պայքար մղել նրանց դեմ, ովքեր ժողովրդին հրահրում են անկարգությունների, ամեն տեսակ լուրեր տարածում, ազգամիջյան գժտություն բորբոքում: Ամենավճռական կերպով՝ ընդհուպ մինչև մեղավորներին ՍՄԿԿ շարքերից վտարելը և քրեական պատասխանատվության ենթարկելը, պայքարել ըստ ազգային հատկանիշի մարդկանց ազատելու վրդովեցուցիչ փաստերի դեմ:

Մասսայական ինֆորմացիայի ու պրոպագանդայի միջոցները պետք է ամեն ինչ անեն, որպեսզի օգնեն կանգնեցնելու իրադարձությունները

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄՈՒՄ

և դրանք փոխադրելու նորմալացման, հաշտեցման հուն: Նրանց կարևորագույն խնդիրն է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և նրան առընչվող իրադրության կացության մասին ՍՍՀՄ Գերագույն սովետի դիմումի իմաստը ու ոգին հասցնել յուրաքանչյուր մարդու, հանրապետության բոլոր աշխատավորներին:

Հանրապետության դատախազությանը և Հայկական ՍՍՀ ՆԳՄ-ին հանձնարարված է անհետաձգելի միջոցներ ձեռնարկել ժամանակին և լրիվին բացահայտելու և քննելու կատարված հանցագործությունները: Մեկ շաբաթվա ընթացքում կոլեգիաներում քննարկել այն շրջանային իրավապահ մարմինների ղեկավարների անձնական պատասխանատվության հարցը, որոնց տարածքում տեղի են ունեցել զանգվածային անկարգությունների փաստեր:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն քննարկեց Գուգարքի շրջանում տեղի ունեցած ազգամիջյան կոնֆլիկտի և նրա ողբերգական հետևանքների հարցը: Ընդունված որոշման մեջ նշված է, որ հանրապետությունում ստեղծված ծայրաստիճան լարված իրադրության պայմաններում կուսակցության Գուգարքի շրջկոմը (շրջկոմի առաջին քարտուղար ընկ. Լ. Բաղդասարյան), ժողովրդական դեպուտատների շրջանային սովետի գործկոմը (շրջգործկոմի նախագահ ընկ. Ս. Ղազարյան) թույլ տվեցին ազգամիջյան կոնֆլիկտի սաստկացում, չապահովեցին պատշաճ վերահսկողություն հասարակական կարգի նկատմամբ:

Գուգարքի շրջանի իրադրության սրմանը նպաստում էին այսպես կոչված «Ղարաբաղ» կոմիտեի Կիրովական քաղաքի կազմակերպության պրովոկացիոն գործողությունները:

Այդ ամենը հանգեցրեց անմիջական ազգամիջյան ընդհարումների: Թույլ են տրվել բռնության և ջարդերի փաստեր, որի հետևանքով վերջին օրերին Գուգարքի շրջանի տարածքում կան զոհեր: Տեղի ունեցած իրադարձությունները հնարավոր դարձան կուսակցության Գուգարքի շրջկոմի և ժողովրդական դեպուտատների շրջանային սովետի գործկոմի քաղաքական կարճատեսության և անտարբերության, աշխատավորության գաղափարաբարոյական, ինտերնացիոնալ ու հայրենասիրական դաստիարակության աշխատանքում թույլ տրված կոպիտ վրիպումների ու ձախողումների հետևանքով: Վճռականություն և օպերատիվություն չդրսևորվեց կանխելու հակաիրավական գործողությունները, կոնֆլիկտները ու հանցագործությունները: Սկզբունքային գնահատական ու վճռական հակահարված չտրվեցին ազգայնական տարրերին, քաղաքական դեմագոգներին ու պրովոկատորներին: Դժվար հատուցելի վնաս հասցվեց ազգամիջյան հարաբերություններին:

Այդ ամենը հնարավոր դարձավ կուսակցական, սովետական, արհմիութենական, կոմերիտական ու տնտեսական ակտիվի զգալի մասի անգործության, ինքնահանգստացման, հավասարապես նաև խիստ դանդաղկոտության, անվճռականության և իրադրության մեջ ճկունորեն կողմնորոշվելու անկարողության պայմաններում, որ դրսևորեց Գուգարքի շրջներքգործբաժինը (պետ՝ ընկ. Ս. Արովյան):

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն ցուցաբերած քաղաքական կարճատեսության, շրջանում տեղի ունեցած հանցավոր գործողությունների համար, որոնց հետևանքով սաստկացավ ազգամիջյան կոնֆլիկտը, որոնք մարդկային զոհերի հանգեցրին, կուսակցության Գուգարքի շրջկոմի առաջին քարտուղար ընկ. Լ. Մ. Բաղդասարյանին հայտարարեց խիստ նկատողություն՝ գրանցելով հաշվառման քարտում, և նրան ազատեց զբաղեցրած պաշտոնից:

Պասիվություն ցուցաբերելու և ազգամիջյան ընդհարումների կանխման ազդու միջոցներ չձեռնարկելու համար Գուգարքի ժողովրդական դեպուտատների շրջսովետի գործկոմի նախագահ ընկ. Ս. Ա. Ղազարյանին հայտարարվեց խիստ նկատողություն՝ գրանցելով հաշվառման քարտում: Անհնար ճանաչվեց նրա հետագա աշխատանքը այդ պաշտոնում:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն կուսակցության Գուգարքի շրջկոմին, ժողովրդական դեպուտատների շրջանային սովետի գործկոմին պարտավորեցրեց անհետաձգելի միջոցներ ձեռնարկել առողջացնելու շրջանի քաղաքական իրադրությունը, կասեցնելու հանցավոր, պրովոկացիոն գործողությունների ամեն տեսակ փորձերը, ստեղծելու մարդկանց կյանքի ու աշխատանքի ապահով պայմաններ:

Հայկական ՍՍՀ ներքին գործերի մինիստրությանը, հանրապետության դատախազությանը հանձնարարված է մանրակրկիտ քննել Գուգարքի շրջանի իրավապահ մարմինների գործունեությունը և խստիվ պատասխանատվության ենթարկել այն պաշտոնատար անձանց, ովքեր անգործություն ու պասիվություն էին ցուցաբերել ստեղծված իրադրության մեջ:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն քննարկեց Եղեգնաձորի շրջանի ադրբեջանական ազգության անձանց հանրապետության սահմաններից զանգվածաբար մեկնելու փաստերի հարցը:

Նշվեց, որ կուսակցության շրջկոմը (շրջկոմի առաջին քարտուղար ընկ. Ս. Թարվերդյան), ժողովրդական դեպուտատների շրջանային սովետի գործկոմը (շրջգործկոմի նախագահ ընկ. Մ. Դովլաթյան) ծայրահեղ իրավիճակում քաղաքական կարճատեսություն, անտարբերություն դրսևորեցին, կոպիտ վրիպումներ են թույլ տրվել աշխատավորների գաղափարաբարոյական և ինտերնացիոնալ դաստիարակության գործում, չկարողացան համախմբել կուսակցական, սովետական, արհմիութենական, կոմերիտական, տնտեսական ակտիվի, իրավապահ մարմինների ուժերը՝ ապահովելու կյանքի և աշխատանքի նորմալ ռիթմը, կայունացնելու իրադրությունը:

1988 թվականի հունիսին շրջանի մի քանի գյուղերի հայ և ադրբեջանական բնակչության միջև ծագած կոնֆլիկտը հանգեցրեց ազգամիջյան հարաբերությունների վատթարացման, առիթ դարձավ սրելու ընդհանուր լարվածությունը, ինչը լրջորեն անդրադարձավ շրջանի տնտեսության վրա: Գրեթե բոլոր ադրբեջանաբնակ գյուղերում գյուղատնտեսական աշխատանքները կազմալուծված են: Առանց խնամքի են մնացել մոտ 17 հազար գլուխ մանր և 1300 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ:

Վերջին ամիսներին շրջանում պահպանվող անկայուն վիճակը, չդադարող միտինգները, գործադուլները չդարձան կուսակցական, սովետական, տնտեսական ակտիվի կողմից լուրջ վերլուծության ու վճռական միջոցների ձեռնարկման առարկա:

Կուսակցության շրջկոմի բյուրոն, շրջսովետի գործկոմը իրենց պասիվությամբ ներողամտություն էին թույլ տալիս հանցավոր տարրերի նկատմամբ, որոնք սրում էին թշնամանքի, ազգամիջյան գժտության մթնոլորտը:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն նշեց շրջանում նորմալ իրադրությունը ապահովելու, բնակչության արտահոսքը կանխելու կուսակցության Եղեգնաձորի շրջկոմի անբավարար աշխատանքը և քաղաքական իրադրության արմատական առողջացման կոնկրետ միջոցներ չձեռնարկելու համար կուսակցության Եղեգնաձորի շրջկոմի առաջին քարտուղար ընկ. Ս. Պ. Թարվերդյանին և Եղեգնաձորի ժողովրդական դեպուտատների շրջանային սովետի գործկոմի նախագահ ընկ. Մ. Ա. Դովլաթյանին հայտարարեց խիստ նկատողություն՝ գրանցելով հաշվառման քարտերում:

Կուսակցության Եղեգնաձորի շրջկոմին հանձնարարված է անհետաձգելի միջոցներ ձեռնարկել առողջացնելու շրջանի բարոյաքաղաքական իրադրությունը:

# В ЦК КП Армении

4 декабря 1988 года состоялось очередное заседание бюро ЦК КП Армении.

Обсужден вопрос о неотложных мерах по предотвращению фактов межнациональных столкновений. Отмечено, что в республике продолжает сохраняться напряженная, взрывоопасная ситуация. В последние дни она приобрела откровенно угрожающий характер. В некоторых регионах со смешанным армяно-азербайджанским населением имели место обострение и расширение конфликтов и столкновений на национальной почве, увеличился взаимный поток беженцев. События в ряде случаев вышли из-под контроля, обернулись гибелью людей. Республика оказалась у крайне опасной черты. Особенно напряженная ситуация сложилась в Гугаркском, Степанаванском, Горисском, Калининском, Араратском, Варденисском и других районах.

В сложившейся обстановке не проявляют должной твердости партийные, советские, комсомольские органы. В работе многих из них нет четкой политической линии, исходящей из подлинных интересов трудящихся. Зачастую они сдают принципиальные позиции, в проводимой идейно-воспитательной работе недостает глубины и наступательности. Боязнь «потерять доверие», а то и поддакивание националистическим настроениям привели к тому, что часть партийного актива сползает с интернационалистических позиций.

Многие публикуемые в печати и передаваемые в эфир материалы подогревают эмоции и страсти, нагнетают обстановку.

МВД Армянской ССР, его органы на местах не приняли решительных мер по пресечению столкновений на межнациональной основе, не справились с задачами обеспечения безопасности населения.

Возникшая в республике ситуация явилась результатом грубых просчетов и ошибок в деятельности партийных, советских и правоохранительных органов, не сумевших добиться коренного перелома в оздоровлении морально-психологического климата в трудовых коллективах, учебных заведениях, мобилизовать силы на предотвращение столкновений на межнациональной основе, массовых беспорядков, повлекших человеческие жертвы.

Бюро ЦК КП Армении обязало горкомы, райкомы партии, лично первых секретарей, правоохранительные органы возглавить работу по стабилизации обстановки в регионах, восстановлению законности и порядка, предотвращению эскалации массовых беспорядков и насилия. Решительно пресекать факты принуждения лиц азербайджанской национальности к выезду за пределы Армении, давать принципиальный отпор демагогам, провоцирующим межнациональные столкновения, тем, кто делает попытки подмены демократических форм общественного поведения разгулом неконтролируемых действий.

Партийным, советским, комсомольским, общественным организациям поручено глубоко разъяснять, что главная задача сейчас — сплотить, консолидировать трудящихся на позициях интернационализма, революционной перестройки, перешагнуть через все взаимные обиды и заняться тем, чтобы умиротворить людей, остановить события в их опасном развитии. Основательно улучшить интернациональное воспитание в первичных партийных организациях, в трудовых коллективах. Вести его методом кропотливой углубленной работы с каждым коммунистом, каждым тружеником.

Горкомам, райкомам партии, исполкомам местных Советов, правоохранительным органам поручено обеспечить безопасность населения, предпринять деловые шаги к оздоровлению межнациональных отношений. Вести бескомпромиссную борьбу с теми, кто подстрекает народ на беспорядки, сеет всевозможные слухи, разжигает межнациональную рознь. Самым решительным образом, вплоть до исключения виновных из рядов КПСС и привлечения к уголовной ответственности, бороться против возмутительных фактов увольнения людей по национальному признаку.

Средствам массовой информации и пропаганды необходимо сделать все, чтобы помочь остановить события и перевести их в русло нормализации, примирения. Важнейшая их задача — довести смысл и дух обращения Верховного Совета СССР о положении в Нагорно-Карабахской автономной области и вокруг нее до каждого человека, до всех трудящихся республики.

Прокуратуре республики и МВД Армянской ССР поручено осуществить безотлагательные меры по своевременному и полному раскрытию и расследованию совершенных преступлений. В недельный срок рассмотреть на коллегиях вопрос персональной ответственности руководителей районных правоохранительных органов, на территории которых имели место факты массовых бесчинств.

Бюро ЦК КП Армении рассмотрело вопрос о межнациональном конфликте и его трагических последствиях в Гугаркском районе. В принятом постановлении отмечено, что в условиях сложившейся в республике крайне напряженной обстановке Гугаркский райком партии (первый секретарь РК т. Багдасарян Л.), исполком районного Совета народных депутатов (председатель РИК т. Казарян С.) допустили эскалацию межнационального конфликта, не обеспечили надлежащий контроль за общественным порядком.

Обострению обстановки в Гугаркском районе способствовали провокационные действия организации так называемого комитета «Карабах» в г. Кироваване.

Все это привело к прямым межнациональным столкновениям. Допущены факты насилия и погромов, в результате чего за последние дни на территории Гугаркского района имеются жертвы. Имевшие место события стали возможны вследствие политической близорукости и инертности Гугаркского райкома партии и исполкома районного Совета народных депутатов, грубых просчетов и провалов в их работе по идейно-нравственному, интернациональному и патриотическому воспитанию трудящихся. Не проявлена решительность и оперативность в предотвращении противоправных действий, конфликтов и преступлений. Не даны принципиальная оценка и решительный отпор националистически настроенным элементам, политическим демагогам и провокаторам. Нанесен трудновосполнимый уро

(Окончание на 4 стр.).